

## ՅԱՌԱԶԻԿԱՅ 21 ՅՈՒՆԻՍԻՆ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ ՊՐՈՎԷԻ ԵՒ ՊԱՔԱՆՈՐԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նկատի ունենալով պսակածե ժահիրի համաճարակն ու կրթական եւ այլազան աշխատանքներու Մարտ ամսուան առաջին օրերէն դադարեցումը, Կիրակի, 26 Ապրիլին, Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը յայտարարեց 2019-2020-ի ուսումնական տարեշրջանի աւարտը անցումային կարգերուն համար:



Այս որոշումին լոյսին տակ, Սուրիոյ վարժարաններու անցումային կարգերու աշակերտները կը փոխեն իրենց կարգը:

Օրեր ետք՝ Երեքշաբթի, 28 Ապրիլ 2020-ին Կրթութեան Նախարարութիւնը Նոր որոշումով մը յառաջիկայ 21 Յունիս 2020-ը ճշդեց որպէս միջնակարգի պրովէ եւ երկրորդականի պաքալորիա կարգերու պետական քննութիւններու թուական:

Կառավարութիւնը յայտնեց, որ այս տարի երկրորդ փուլի քննութիւն տեղի պիտի չունենայ, Նկատի ունենալով համաճարակէն Նախագգ ուշացման համար կառավարութեան որդեգրած քայլերը:

## ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ 105-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԴՕՂԱՆՁԵՅԻՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒՆ ԶԱՆՔԵՐԸ ԵՒ ՄԱՐԵՅԱՆ ՓՈՂՈՅԻ ԼՈՅՍԵՐԸ

Հայոց Յեղասպանութեան 105-րդ տարելիցի առիթով, 23 Ապրիլին՝ երեկոյեան ժամը 21:00-ին հիւնքին եկեղեցիներու զանգերը, եւ անոնց ղօղանջներուն ընթացքին 3 վայրկեան մարտեցան Երեւանի եւ մարզական կեդրոններու փողոցներուն լոյսերը:



Քաղաքացիներուն կոչ ուղղուած էր Նաեւ մարել իրենց բնակարաններուն լոյսերը եւ բջիջային հեռաձայններու լոյսերուն միջոցով պատուհանէն խորհրդրդանշել միասնական ներկայութիւն անմար կրակին շուրջ:

Լուսավառ ոգեկոչման վայրկեանը ունեցաւ իր խորհրդանշական արձագանգը Ծիծեռնակաբերդէն, ուր Կամօ Սէրյանեան եւ Լիանա Ալեքսանեան կատարեցին «Արի Իմ Սոխակ» երգը:

## ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ 105-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՀԱԼԷՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒՆ ԶԱՆՔԵՐԸ ԴՕՂԱՆՁԵՅԻՆ, ՀԱԼԷՊԱՀԱՅԵՐԸ ՄՈՄԵՐ ՎԱՌԵՅԻՆ



Հինգշաբթի, 23 Ապրիլի երեկոյեան ժամը 8:00-ին հալէպահայ եկեղեցիներուն զանգերը ղօղանջեցին, իսկ հայ հոգեւոր պետերն ու հալէպահայութիւնը իրենց բնակարաններուն պատշգամներէն մոմեր վառեցին՝ ի յիշատակ Հայոց Յեղասպանութեան սրբադասուած Նահատակներուն:

## ՅԱԿՈՒՔ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՐԵԱՆ. «ԻՇՆԱՆՈՒԹԵՆԸ Կ'ԱԿՆԿԱԼԵՆՔ, ՈՐ ՀԱՄԵՐԱՇԽ ՄԹՆՈՒՈՐՏ ՍՏԵՂՈՒՆ»

«ԱԶԱՏ ՕՐ» ԳՐԱԿԱՅ ԿԱՐԳՈՎ ՀԵՏԵԿԱԼ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՈՒՆԵՑԱԾ Է ԶՅԴ ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՅԻՉ ՅԱԿՈՒՔ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՐԵԱՆԻՆ ՀԵՏ

Մարտի սկիզբը, Յունաստան այցելեց ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Յակոբ Տէր Խաչատուրեան:

Օրին, անդրադարձած էինք կատարուած կարեւոր հանդիպումներուն՝ Յունաստանի քաղաքական անձնաւորութիւններու հետ, որոնց մէջ յատկանշական եղաւ ջերմ ընդունելութիւնը՝ Յունաստանի Հանրապետութեան օրուան Նախագահ Փրոքըփիս Փաւլովուլոսին:



ՅՏԻ առիթը ունեցաւ Նաեւ Աթենքի եւ Թեսաղոնիկէի մէջ հանդէս գալու գաղութային կառոյցներու ներկայացուցիչներուն առջեւ եւ սպանիչ կերպով ներկայացնելու ՀՀ Դաշնակցութեան տեսակետները ազգային, համահայկական եւ հայրենի իրականութեան հետ աղերս ունեցող հարցերու շուրջ:

Պսակածե ժահիրի պարտադրած համաշխարհային արգիլումներու լոյսին տակ, «Ազատ Օր» ընկ. Յակոբ Տէր Խաչատուրեանին հետ ունեցաւ հեռավար հարցազրոյց մը, որուն ընթացքին խօսակցութիւնը ընթացաւ Հայաստանը, Արցախը եւ հայաշխարհը յուզող օրակարգերուն շուրջ. մասնաւորաբար լուսարձակի տակ առնուեցան ներհայաստանեան ու արցախեան զարգացումները եւ ՀՀ Դաշնակցութեան գործունեութիւնը: Բնականաբար, մեր խօսակցութիւնը ընդգրկեց Նաեւ Յունաստան այցելութեան արժեւորումը: Ստորեւ, մեր ընթերցողներուն կը ներկայացնենք հարցազրոյցի ամբողջութիւնը:

### Զեր Հայաստան վերջին այցելութեան ընթացքին, հանդիպում ունեցաք Հայաստանի Նախագահին եւ վարչապետին հետ: Կը խնդրենք անելի մանրամասնել այդ մասին:

Հայաստանի Հանրապետութեան Նախագահին եւ վարչապետին հետ պարբերաբար հանդիպում կ'ունենանք Երբ Հայաստան գտնուիմ: Նախագահին հետ խօսակցութիւնը ընդգրկեց Հայ դատի մեր գրասենեակներու եւ յանձնախումբերու վերջին խորհրդաժողովի արդիւնքները, 2020-ի համահայկական Նախաձեռնութիւնները՝ Ներառեալ Սեւրի դաշնագրի 100-ամեակի Նշումը, Հայաստանի եւ Արցախի քաղաքական իրավիճակը եւ ազգային օրակարգի հարցերը: Հ.Հ. վարչապետին հետ Նաեւ քննարկեցինք համահայկական ու տարածաշրջանային հարցեր, ներառեալ Արցախի բնակչութիւններու ներկայ փուլը եւ Հայաստան-Վրաստան յարաբերութիւնները: Երկու հանդիպումներն ալ անցան փոխադարձ հասկացողութեան մթնոլորտի մէջ:

Մենք, անկախ իշխանութեան հետ մեր ունեցած ներքաղաքական տարակարծութիւններէն, միշտ զգացած ենք անհրաժեշտութիւնը համահայկական ու Հայ դատի աշխատանքներու շուրջ խորհրդակցելու հայրենի իշխանութեան բարձրագոյն ներկայացուցիչներուն հետ, տեղեկութիւններ փոխանակելու, փոխադարձ համագործակցութեան եզրեր գտնելու եւ աշխատանքը համադրելու առնչութեամբ:

### Փետրուարի վերջաւորութեան, Արցախի մէջ տեղի ունեցաւ Հայ դատի աշխարհասփիւռ յանձնախումբերու եւ գրասենեակներու խորհրդաժողովը: Օրին, մեր մամուլը անդրադարձաւ ժողովին մասին, սակայն այժմ կը խնդրենք ունենալ ձեր գնահատականը:

Մենք, պարբերաբար կը գումարենք Հայ դատի խորհրդաժողովներ, ուր ի մի կը բերենք մեր գրասենեակներու ու յանձնախումբերու ներկայացուցիչները: Որոշ տարիներ, այդ խորհրդաժողովները կը կատարենք տարածաշրջանային հիմքով, իսկ 2-3 տարին անգամ մըն ալ՝ կեդրոնական մակարդակով, Հայաստանի ու Արցախի մէջ:

Վերջին տարիներուն, մեր մեծագոյն յաջողութիւնը այն է, որ գրասենեակներու ցանցը ընդարձակուած է եւ համալրուած՝ Հայ դատի արհեստավարժ յաւելեալ նուիրեալներով, որոնք պատնէշի վրայ են օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, տարին 365 օր: Անոնք Էապէս Հայ դատով կ'ապրին, կը գործեն, կ'աշխատին որպէս կազմակերպ ու անխոնջ բանակ: Այլեւս, միայն կամաւոր աշխատանքով չենք բաւարարուիր, թէեւ այդ երբեք չ'ենթադրեալ:

**Խմբագրական**

### ԳԵՂԱՐՈՒԵՍԱԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԳՈՒՄԸ

Հայոց Ցեղասպանության կիրճը արժարժող գեղարուեստական գրականությունը, երգն ու երաժշտությունը եւ ֆիլմարուեստը նոյնքան կարեւոր դերակատարութիւն ունին ճանաչումին, հարցին ըմբռնումին եւ թուրքիոյ ուրացման քաղաքականութեան մերկացումին վրայ, որքան փաստավաւերագրական կիրճերը:

Ճիշդ է որ անոնք որպէս փաստ չեն կրնար օգտագործուիլ գիտաուսումնասիրական շրջանակներու կողմէ, սակայն անելի մեծ ազդեցութիւն կը թողուն ընթերցողին, դիտողին, այլ խօսքով հանրութեան վրայ, անելի արագ կը հասնին լայն հասարակութեան, որովհետեւ չոր ու ցամաք տեղեկութիւններ չեն պարզապէս, կ'արտացոլեն ապրումներ, երազներ, յարաբերութիւններ, հոգեբանական ապրումներ վիճակներ:

Արուեստի ճամբով իրականութիւնը դիտողին կամ ընթերցողին կը հասնի անելի մեղմ, հանգիստ ու ազդեցիկ ընթացքով մը, կը թափանցէ անոր ոչ միայն մտքէն այլեւ հոգիէն ներս ու անպայման կը մղէ զինք հետաքրքրուելու, պրպտելու, իրականութեան հասնելու:

Գեղարուեստին մէջ անկեղծութիւն կայ: Անկեղծութիւն մը որ դժուար է խեղաթիւրել: Ինչպէ՞ս կարելի է կեղծել ցեղասպանութեան ենթարկուած մօր մը օրօրոցայինը եւ անոր արձագանգը իր գաւկին յիշողութեան մէջ: Ինչպէ՞ս կարելի է կեղծել ցեղասպանութիւնը ապրած բանաստեղծի մը ցաւին ճիշդ, լեզուն, նկարագրութիւնը: Ինչպէ՞ս կարելի է կեղծել սերունդէ սերունդ անցած սովորութիւնները, երազները, յիշողութիւնը ու վրէժի զգացումը: Ինչպէ՞ս կարելի է կեղծել Հայոց Ցեղասպանութիւնը ապրած, անոր հետեւանքները կրած նկարիչի մը գծած պատկերը, ուր կ'արտացոլայ պատմութիւն մը, որուն մէջ կարօտը, պոռթկումը, զրկանքը, սպանութիւնը, հայրենազրկումը, գաղթը առանձին գոյներ ունին, գոյներ, որոնք դժուար թէ իրենց նմանը ունենան, որովհետեւ ճշմարիտ ապրումներու, հոգեվիճակներու արտայայտութիւն են անոնք:

Նոյնն է պարագան այն ֆիլմերուն, որոնք մարդկային պատմութիւններով կը ներկայացնեն արեւմտահայութեան տառապալի կեանքը Ցեղասպանութեան տարիներուն, կեղեքումներն ու կոտորածները եւ Ցեղասպանութեան սրտառուց նկարագրութիւնները: Աւելին՝ արեւմտահայուն անանդութիւնները, սովորութիւնները, լեզուն, երգերն ու վերքերը, հայ-թըրքական առնչութիւնները, փոխադարձ ազդեցութիւնները եւ այլն:

Արուեստը առաջնահերթ դեր ունի Ցեղասպանութեան ճանաչման գործընթացին մէջ: Ցեղասպանութիւնը շարժանկարի եւ արուեստի այլ ոլորտներու ճամբով նաեւ աշխարհին ծանօթացնելը ուժեղ գէնք է, որ կ'օգտագործուի, պէտք է օգտագործուի ի նպաստ Հայ Դատին, ի նպաստ ճշմարտութեան, մանաւանդ եթէ նկատի ունենանք, որ թուրք ժողովուրդը տարիներ շարունակ ուրացումի յանկերգը կը լսէ իր երկրի յաջորդական իշխանութիւններէն եւ իրականութիւնները ըմբռնելու դժուարութիւն ունի, պիտի ունենայ բնականաբար, որովհետեւ շատ յաճախ անտեղեակ մնացած է մեծ ողբերգութենէն եւ անոր հետեւանքներէն իր երկրի իշխանութիւններուն վարած քաղաքականութեան հետեւանքով:

Եթէ քաղաքականութիւնը ունի իր սահմանները, արուեստի բնագաւառէն ներս ոչ մէկ արգելք եւ սահման գոյութիւն ունի:

Այս մտահոգութիւնները արուեստի ու մշակոյթի բնագաւառ փոխադրելու փորձերը գնահատելի են, բայց սակաւաթիւ: Հայ արուեստագետը, մտաւորականը, գրողը նոյնքան գործ ունին տանելիք, որքան Հայ Դատի համար պայքարող քաղաքագետը:

«Գ.»

-Երեքշաբթի, 28 Ապրիլ 2020-ին, Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարեց պսակածեւ ժահրով վարակուած 2 նոր պարագաներու բուժուած ըլլալը:

Մահացած	Բուժուած	Վարակուած
03	21	43

Այսպիսով Սուրիոյ մէջ պսակածեւ ժահրով վարակուածներուն թիւը կ'ըլլայ 43, մահացածներունը՝ 3, իսկ բուժուածներունը՝ 21:

-Նոյն օրը, Սուրիոյ կառավարութիւնը յայտարարութիւն մը հրապարակելով յայտնեց, որ սուրիական նահանգներուն եւ արուարձաններուն միջեւ շրջագայութիւնը յառաջիկայ օրերուն պիտի արտօսուի, դիրացնելու համար քաղաքացիներուն երթուղարձը:



-Սուրիոյ կառավարութեան խորհրդատու դոկտ. Ապտուլ Զատեր Ազուզ 28 Ապրիլին յայտնեց, որ սուրիական բանակի հակաօդային պաշտպանութեան համակարգերը դեմ դրին Դամասկոսի ուղղութեամբ Իսրայէլի արձակած հրթիռներուն, վար առնելով անոնց մեծամասնութիւնը: Ազուզ «Սփութիք» ձայնասփիւռի կայանին հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին խստիւ դատապարտեց Սուրիոյ նման ինքնիշխան երկրի մը դեմ իսրայէլեան յարձակումը եւ միջազգային ընտանիքին լուռ մնալը, ինչ որ տարածաշրջանի ապահովական վիճակը կը վտանգէ եւ խաղաղութեան հաստատումին խոչընդոտ կը հանդիսանայ:



- «Շամ Թայմզ» հաղորդեց, որ Սուրիոյ մէջ շուրջ 25 արիեստաւոր յաջողեցան համաշխարհային տուեալներով շնչառական արիեստական գործիքներու 3 օրինակ արտադրել: Սուրիացի Արիեստաւորներու Ընդհանուր Միութիւնը Դամասկոսի մէջ իր արիեստանոցէն ներս յաջողեցաւ արտադրութեան յատուկ եղանակի մը հասնիլ, ըստ որուն միութիւնը ամսական դրութեամբ կարելիութիւն պիտի ունենայ անելի քան 300 արիեստական շնչառական գործիք արտադրելու, բաւարարելով ե՛ւ տեղական, ե՛ւ արտաքին շուկային պահանջը:



- Շաբաթ, 25 Ապրիլ 2020-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, հիւրընկալութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գեղշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Ազգային Առաջնորդարանէն ներս տեղի ունեցաւ քրիստոնէայ 11 համայնքապետներու հերթական ժողովը, որուն ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 105-րդ տարելիցին, յոյն ուղղափառ «Նապի Իլիաս» եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած եօթ տարիներէ ի վեր առեւանգուած Առաջնորդներ՝ Պուլոս Եազճիի եւ Եուհաննա Իպրահիմի վերադարձը հայցող միասնական աղօթքին եւ քրիստոնէայ եկեղեցիները մտահոգող հարցերու, յատկապէս պսակածեւ ժահրի համաճարակին լոյսին տակ ստեղծուած տնտեսական եւ առողջապահական կացութեանը:



# Լուրեր Հայաշխարհին

## ՆԻԿՈՒ ՓԱՇՏԵԱՆԻ ԾԻԾԵՆԱԿԱԲԵՐՂԵՆ ՅՂԱԾ ՈՒՂԵՐՁԸ՝ ՃԵՂԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ 105-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՅՈՎ

**Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան 24 ապրիլին Ծիծեռնակաբերդի բարձունքին հետեւեալ ուղերձը յղեց.**

«Այսօր՝ 2020 թուականի Ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանութեան 105-րդ տարելիցն է: Օսմանեան Թուրքիայի՝ երկար տարիների հայատեաց քաղաքականութիւնը 1915 թուականին, երիտթուրքերի կառավարութեան օրօք, հասաւ գագաթնակէտին:

Տարիներ տեւած եւ պետական որոշմամբ իրականացուած ցեղասպանութեան հետեւանքով Արեւմուտեան Հայաստանն ամբողջութեամբ հայաթափուեց. 1,5 միլիոն մեր հայ-

զար հայեր, հիմնականում Հայոց Ցեղասպանութեան զոհերի յետնորդներ, հայրենադարձուեցին Հայաստան, դարձան Խորհրդային Հայաստանի լիարժէք մասը, բորբոքելով այստեղ անթեղուած ցաւը, յիշողութիւնը, կարօտը:

Խորհրդային Հայաստանի իշխանութիւնն Ապրիլի 24-ը Ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր յայտարարելու եւ Ծիծեռնակաբերդում ցեղասպանութեան զոհերի յուշահամալիր կառուցելու որոշում կայացրեց: Եւ այս վեհաշուք կոթողը դարձաւ մեր ժողովրդի յաւերժութեան ամենապերճախօս խորհրդանշաններից մէկը:



րենակիցները սպանուեցին, հարիւր հազարաւոր հայեր դարձան գաղթական, զրկուելով իրենց պատմական հայրենիքում ապրելու իրաւունքից:

Հայոց Ցեղասպանութեան՝ Մեծ եղեռնի հետեւանքով հայ ժողովուրդը ոչ միայն ահաբեկի մարդկային կորուստներ կրեց, այլեւ ենթարկուեց հայրենազրկման եւ մշակութային ջարդի: Անդամալի էին մեր ժողովրդի հոգեւոր եւ կրօնական ժառանգութեան կորուստները, սկայական էին նրա նիւթական վնասները: Օսմանեան Կայսրութեան իշխանութիւնների իրականացրած Հայոց Ցեղասպանութիւնը ոչ միայն մեր ժողովրդի ինքնութեան, այլեւ ողջ մարդկային քաղաքակրթութեան դէմ ուղղուած յանցագործութիւն էր:

Իսկ 1915 թուականի Ապրիլի 24-ը դարձաւ այս ողջ գործընթացի ամենաուժեղ խորհրդանշանը, որովհետեւ այդ օրը հարիւրաւոր հայ մտաւորականներ, կրօնական ու քաղաքական գործիչներ, երիտթուրքերի կառավարութեան հրամանով, ձերբակալուեցին, աքսորուեցին, սպանուեցին կամ անհետ կորան:

Արդէն 55 տարի Ապրիլի 24-ին մենք ոգեկոչում ենք Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակը: Առաջին անգամ 1965 թուականին էր, երբ հազարաւոր հայեր մայրաքաղաք Երեւանում այդ օրը յիշատակի գանգուածային միջոցառում իրականացնելու հնարաւորութիւն ստացան: Եւ սա կապուած էր ոչ միայն Խորհրդային Միութիւնում «ջերմացման ժամանակաշրջանի», այլեւ այն փաստի հետ, որ 1946-49 թուականներին շուրջ հարիւր հա-

## ԻՇԽԱՆ ՍԱՐԱԹԵԼԵԱՆ. «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՂԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ԼՈՒԾՈՒՄԸ ԱՆԸՆՊՈՒՆԵԼԻ Է»

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սարաթելեան «Թերթ»-ին հետ զրոյցի մը ընթացքին յայտնեց, որ ՀՅԴ Բիւրօն յայտարարութիւն տարածած էր Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման համար կատարուած յայտարարութեան մասին՝ շատ յստակ յայտնելով, որ Հայաստանի ղեկավարութիւնը պէտք է յայտարարէ, թէ բանակցային սեղանին չկայ փոլային լուծման առաջարկ եւ անոնց շուրջ իրենք չեն բանակցիր, չկայ միջազգային ճնշում Հայաստանի վրայ՝ այդ առաջարկին շուրջ բանակցելու:



«Մենք կը կարծենք, թէ անընդունելի է տագնապի լուծումը փոլային տարբերակով, եւ երբեք կարելի չէ բանակցիլ անոր շուրջ», ըսաւ ան:

Յիշեցնենք, որ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով յայտարարած էր, որ հիմա Լեռնային Ղարաբաղի տագնապի բանակցային սեղանին կայ եւ կը քննարկուի լուծման փոլային տարբերակը:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Չոիրայ Մնացականեանը, անոր ի պատասխան, յայտնած էր, որ հայկական կողմերուն համար ընդունելի չէ լուծման որեւէ տարբերակ, որ չի նախատեսեր Արցախի ինքնորոշման իրաւունքին առանց որեւէ սահմանափակման իրականացումը եւ կրնայ վտանգել Արցախի ժողովուրդին ապահովութիւնը:

«Հայաստանի համար ընդունելի չեն տակաւին մինչեւ 2018 ներկայացուած եւ ղարաբաղեան խաղաղ լուծման փոլային տարբերակ ենթադրող առաջարկները: Աւելին, 2018-էն ի վեր Հայաստան չի վարեր բանակ-»

## Արցախի Յարուստիւնեան. «Հայ Ղաթի Ղազարը Համապարտապէս Է Եւ Վերանորոգեալ Ժամկէտ Զորահ»

**Արցախի Հանրապետութեան նորընտիր նախագահ Արայիկ Յարուստեան գրառում կատարեց Ապրիլ 24-ին առիթով:**

«Մեծ եղեռնի զոհերի յիշատակին այսօր յարգանքի տուրք կը մատուցեմ համահայկական ուխտատեղի դարձած Ծիծեռնակաբերդում: Դա



Արցախի Հանրապետութեան ընտրուած նախագահիս ոչ պաշտօնական, բայց արարողակարգային առաջին միջոցառումն է, որը իւրօրինակ ուղերձ էմ համարում:

Հայոց Ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը քաղաքակիրթ աշխարհի կողմից միայն իւրայատուկ գնահատական չէ հայ ժողովրդի կրած անասելի զրկանքներին կամ յարգանքի տուրք՝ մեր մէկուկէ միլիոն նահատակների յիշատակին: Այն նախ եւ առաջ Աստուծոյ ու սերունդների հանդէպ ունեցած պատասխանատուութեան զգացում է, որի փոխարէն, սակայն, արդէն 105 տարի ականատեսն ենք ժխտողական քաղաքականութեան: Բայց Հայ դատի պահանջը համամարդկային է եւ վաղեմութեան ժամկէտ չունի:

Մեր ժողովրդի յարատեւութեան անվերջանալի պայքարը մենք վստահաբար շարունակելու ենք՝ աւելի ամրապնդելով ու հզօրացնելով մեր միասնական հայրենիքը, որտեղ քաղաքացին միշտ ունենալու է անվտանգութեան, ինքնիրացման ու ապագայի հանդէպ յուսալիութեան լիարժէք զգացում եւ պայմաններ: Սա է իմ եւ մեր տեսլականը:

Յիշում ենք եւ պահանջում:»

\*\*\*

**Արայիկ Յարուստեանի դիմատետրի իր էջին վրայ նաեւ կատարած է**

Շար.՝ էջ 9 >

Շար.՝ էջ 9 >



















Ռաֆֆի Սիլահեան

## ՀԱՅԿԱԿԱՆ

### ԼԵՈՆ ԱՐՈՆԵԱՆ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻ «ԱԶԳԵՐՈՒ ԲԱԺԱԿ» ԱՌՅԱՆՑ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

ՖԻՏԵ-ի մամուլը էջը յայտարարեց, որ Հայաստանի ճատրակի առաջատար Լեոն Արոնեան պիտի մասնակցի ՖԻՏԵ-ի եւ Chess.com-ի կողմէ կազմակերպուած «Ազգերու Բաժակ» առցանց մրցաշարքին: Մրցաշարքին կը մասնակցին 6 հաւաքականներ. Եւրոպայի հաւաքականը, ԱՄՆ-ի հաւա-



**TEAM EUROPE**  
 Maxime Vachier-Lagrave  
 Levon Aronian  
 Anish Giri  
 Anna Muzychuk  
 Jan-Krzysztof Duda  
 Nana Dzagnidze  
 Captain: Garry Kasparov  
 Average rating:  
 2.687 (standard)  
 2.687 (rapid)

քականը, Ռուսիոյ հաւաքականը, Չինաստանի հաւաքականը, Հնդկաստանի հաւաքականն ու «Միջազգային Միացեալ» հաւաքականը: Լեոն Արոնեան մաս պիտի կազմէ Եւրոպայի հաւաքականին, որուն մաս կը կազմեն նաեւ Մաքսիմ Վաշիե-Լագրավը (Ֆրանսա), Անիշ Գիրին (Հոլանտա), Աննա Մուչիչուկը (Ուքրանիա), Եան-Կշիշտոֆ Թուսան (Լեհաստան), Նանա Ջագնիձէն (Վրաստան) եւ աւագ Կարի Գասպարովը (Ռուսիա): Մրցաշարքը տեղի պիտի ունենայ 5-10 Մայիսին: Աւելցնենք, որ իր կնոջ՝ Արիանա Զառնիլիի ողբերգական մահէն ետք, այս առաջին անգամն է, որ Արոնեան պիտի մասնակցի ճատրակի մրցաշարքի: Վերջերս ան փափաք չյայտնեց մասնակցելու Magnus Carlsen Invitational առցանց մրցաշարքին:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՆԵՅՄԱՐ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԻՉԱԿԵՏԻՆ ՄԷՃ Է

Սպանիոյ ախոյեան Պարսելոնայի նախագահ Եոսիփ Մարիա Փարթեմեոն անձամբ հետաքրքրուած է Փարիզ Սան Շերմանի յարձակողական խաղացող Նեյմարի տեղափոխութեամբ: Սպանական Marca-ն գրեց, որ Փարթեմեոն կը հաւատայ, որ Նեյմարի տեղափոխութիւնը կարելի է այս տարեշրջանին իրագործել, որովհետեւ ըստ նախագահին, ակումբը այս տարի կրնայ ձեռք բերել Չեմփիընզ Լիկի կոչումը, եւ այս մէկը մեծ նպաստ պիտի բերէ Նեյմարի տեղափոխութեան: Ամիսներ առաջ շրջանառուած տարածայնութիւններուն համաձայն, Պարսելոնայի ղեկավարները Նեյմարին խոստացած են վերադարձնել քաթալոնական ակումբ: Յիշենք, որ պրագիլցի խաղացողը 2017-ին հեռացաւ Պարսելոնայէն եւ միացաւ ֆրանսական ակումբին, բայց իր նոր խումբին մէջ ան կազմի մնացեալ խաղացողներուն հետ բազմաթիւ հարցեր ունեցաւ:



Սպանիոյ ախոյեան Պարսելոնայի եւ Իրուաթիոյ հաւաքականի կիսապաշտպան Իվան Ռաքիթիչը յաջորդ մրցաշրջանին կրնայ ներկայանալ

### ԹՈՒՅՆ ՀԱՍԸ Կ'ՈՒՇԷ ՈՎԵԻԹԻՉԸ

Սպանիոյ ախոյեան Պարսելոնայի եւ Իրուաթիոյ հաւաքականի կիսապաշտպան Իվան Ռաքիթիչը յաջորդ մրցաշրջանին կրնայ ներկայանալ

անգլիական Թոթենհամ խումբի կազմին հետ: 32-ամեայ ֆուլթայլիստին վաստակով հետաքրքրուած է փորթուկալցի մարզիչ ժոզէ Մորինիօն: Այս տեղեկութիւններուն անդրադարձաւ Mundo Deportivo-ն: Քաթալոնական ակումբին տեղափոխութիւններուն նպատակներէն մէկն ալ անգլիական ակումբին ֆրանսացի կիսապաշտպան Թանկույ Նոոմիլիէն ներգրավելն է:



Ռաքիթիչին ձեռք բերելու ցանկութիւն ունին նաեւ Իւվենթուսը, Նափոլին եւ Աթլետիքօն: Վերջին շրջանին Պարսելոնայի պատասխանատուները տարբեր առիթներով յայտնեցին, որ յաջորդ տարեշրջանին Ռաքիթիչ զանց պիտի առնուի կազմէն: Անոր խումբին հետ պայմանագրութիւնը վերջ կը գտնէ 2021-ին:

### ՖԻՖԱ-Ն ՆԻԹԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՍԱԴՐԱԾ Է ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՖԵՏԵՐԱՍԻՈՆՆԵՐՈՒՆ


Միջազգային ֆուլթայլի ֆետերասիոնը (դաշնութիւնը) ՖԻՖԱ-ն յայտարարեց, որ պսակածէ ժաիրին պատճառով երկիրներ ենթարկուած են



կիւթական մեծ վնասներու, որուն համար միջազգային դաշնութիւնը որոշած է երկիրները դաշնութիւններուն տրամադրել 150 միլիոն ամ. տոլար: Ըստ «Ռոյթըրզ»-ին, ՖԻՖԱ-ն իր այս որոշումով կիւթական պիտի յատկացնէ համաշխարհային գործող 211 ֆուլթայլի ֆետերասիոններու, որոնց մէջ են նաեւ Սուրիան եւ Հայաստանը: ՖԻՖԱ-ի նախագահ ժիանի Ինվանիթիօ ըսաւ, որ պսակածէ ժաիրին հետեւանքով երկիրներ կրեցին մեծ վնասներ, իսկ ակումբներ ստիպուեցան նուազեցնել իրենց խաղացողներուն ամսականները: Նման պարագաներու մեր պարտականութիւնն է օգտակար դառնալ երկիրներուն:

Թիւ 5

Աարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:



Նախորդ Թիւի Պատասխանն է ♖g8#

<b>Երկուրեւոր</b> 30/3	<b>Երեքեւոր</b> 31/3	<b>Չորեքեւոր</b> 1/4	<b>Հինգեւոր</b> 2/4	<b>Ուրբաթ</b> 3/4	<b>Շաբաթ</b> 4/4	<b>Կիրակի</b> 5/4
8° 18°	9° 19°	9° 19°	8° 20°	10° 21°	12° 22°	12° 23°

## ՀԱՅՈՑ ԺԵՂԱՍԴԱՆՈՒԹԵԱՆ 105-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ՆՈՒԻՐՈՒԾ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՏԱՂԿԵՄԱՏՈՅՑ (ԴՈՒՓԱԿ ԵՒ ՌՈՒՂ ԱՓՈՒՐՄԱՆ)

Հալեպի մէջ, Հայոց Յեղասպանութեան 105-րդ տարելիցին նուիրուած Սուրբ Եւ Անմահ Պատարագ եւ ծաղկեմատոյց տեղի ունեցաւ Ուրբաթ, 24 Ապրիլ 2020-ին, առաւօտեան ժամը 9:30-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Հայոց Յեղասպանութեան 1,5 միլիոն սրբադասուած նահատակ-



ներուն յիշատակին Սուրբ Պատարագ մատուցեց եւ օրուան պատգամը ուղղեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան: Պատարագին ներկայ էին նաեւ ՀՀ Հալեպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգսեան, Հալեպի Մարդասիրական Առաքելութեան Խումբի Հիւպատոսութեան ներկայացուցիչ գնդապետ Արկատի Տօնոյեան, Բերիոյ Հայ Կաթողիկէ Թեմի Առաջնորդ Արհ. Տ. Պետրոս



Արք. Միրիաթեան, Սուրբիոյ Հայ Աւետարանական Համայնքի պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան, Սուրբիոյ Խորհրդարանի հայազգի ներկայացուցիչ Ժիրայր Ռէիսեան, Ազգ. Վերջ. Վարչութեան ներկայացուցիչ Հրաչ Յակոբեան, սուրիահայ երեք կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Ազգ. Երեսփոխանական Ժողովի, Ազգ. Վարչութեան, Կրօնական Ժողովի, բարեսիրական, մշակութային եւ մարզական միութիւններու ներկայացուցիչներ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ուղղեց իր պատգամը, բնաբան ունենալով Եգեկիէ մարգարէի հետեւեալ խօսքը. «Ահա եւ ձեր մէջ հոգի պիտի դնեմ եւ պիտի կենդանանաք», նշելով, որ 20-րդ դարու սկզբը-նաւորութեան Հայոց Յեղասպանութեամբ հայ ժողովուրդը կրեց ամենամեծ կորուստը, սակայն ընկերկեցաւ, այլ պայքարեցաւ, որպէսզի

ապահով կեանք մը ապրի հայրենի իր հողերուն վրայ: «Մեր դարաւոր թշնամին փորձեց թաղել հայուն ծրագիրը, որն էր կերտել ազատ, անկախ եւ ամբողջական Հայաստան, որուն համար հայ ժողովուրդը կրեց կեանքի այդ դառն ճանապարհը»: Աւելցնելով Սրբազան Հայրը ըսաւ. «Թշնամին երազը չհրականացաւ: Տեր Չօրի անապատը ազատութիւն գոյեց եւ մարգարէին բառերով հայ ժողովուրդը Տեր Չօրէն յարութիւն առաւ եւ վերակենդանացաւ»:



Հանդիսաւոր թափօրով Առաջնորդ Սրբազան Հայրը եւ բոլոր ներկաները ուղղուեցան դէպի եկեղեցւոյ շրջափակ, ուր Դպրաց Դասի անդամները մատուցեցին շարականներ, ապա ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա» մաղթերգը:

Այնուհետեւ, կազմակերպութեամբ՝ Հայ Երիտասարդաց Միութեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող Հայոց Յեղասպանութեան նահատակներուն յուշակոթողին դիմաց տեղի ունեցաւ ծաղկեմատոյց

ՀՄԸՄ-ի Հալեպի Մասնաճիւղի փողերախումբէն երբ. Յակոբ Ուրիշիկեանի փողի նուագակցութեամբ, ծաղկեպսակներ գետեղեցին սուրիահայ երեք համայնքապետները, ՀՀ Հալեպի Գլխաւոր Հիւպատոսը, Հալեպի Մարդասիրական Առաքելութեան Խումբի Հիւպատոսութեան ներկայացուցիչը, Սուրիահայ երեք կազմակերպութիւնները, Սուրբիոյ Խորհրդարանի Հայազգի երեսփոխանը, Ազգային երեսփոխանական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչները, ՍՕԽ-ը, ՀՄԸՄ-ը, Համազգայինը, Նոր Սերունդ Մշկթ. Միութիւնը, ՀՄՍ-ը Թեքեան, Մշկթ. Միութիւնը եւ ՀԲԸՄ-ը:

## ՀԱՅՈՑ ԺԵՂԱՍԴԱՆՈՒԹԵԱՆ 105-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ՆՈՒԻՐՈՒԾ ՄԻՋՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՅՈՒՇԱՆԱԴԵՍ

Հովանաւորութեամբ հայ երեք համայնքապետներուն, Հինգշաբթի, 23 Ապրիլ 2020-ին, կէսօրէ ետք ժամը 4:00-ին, Հայ Աւետարանական Եմմանուէլ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ միջարանուանական յուշահանդէս, ներկայութեամբ հայ հոգեւոր պետներուն, ՀՀ Հալեպի Գլխաւոր Հիւպատոսին, ՀՀ Հալեպի Մարդասիրական Խումբի Գնդապետ Արկատի Տօնոյեանի եւ քահանայ հայրերուն:

Ողջունի խօսք արտասանեց եւ օրուան հանդիսավարութիւնը կատարեց պատուելի Սիմոն Տէր Սահակեան, որ նախ հրաւիրեց Բերիոյ Հայ Կաթողիկէ Թեմի Առաջնորդ Արհ. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանը, այս առիթով իր պատգամը ուղղելով:



Գերապայծառը իր երախտագիտութիւնը յայտնեց սուրիական հայրենիքին Հայոց Յեղասպանութեան ճանաչման համար: Արհիպատիւ Տէրը անդրադառնալով պսակածեւ ժահրի համաճարակին ու անոր ազդեցութեան մեր աշխոյժ առօրեային վրայ, յիշեց Ղուկասու Աւետարանի 21-րդ գլխուն մէջ յիշուած մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի այն խօսքը, ըստ որուն պատերազմներ, աղետներ, խռովութիւններ, երկրաշարժեր եւ համաճարակներ ընթացք պիտի առնեն, պիտի հալածուին եւ չարչարուին, սակայն աշխարհին վերջը պիտի չըլլայ, որովհետեւ Աստուած մեզի հետ է եւ մեր հաւատքով, վստահութեամբ, համ-



բերութեամբ, հաւատարմութեամբ եւ յարատեւութեամբ պիտի յաղթահարենք բոլոր չարիքները:

Գեղարուեստական յայտագիրով ելոյթ ունեցաւ Հայ Աւետարանական Համայնքի երգչախումբը, խմբավարութեամբ Գայիանէ Սիմոնեան-Տէրեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Ժագ Պոզեաքաւեանի:

Ամունքով հանդէս եկաւ Արհիւս Պօշկեպեան, ներկայացնելով Ռոգա Պետրոսեանի «Քարտեզ»ը: Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ

Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան իր պատգամը ուղղելով ըսաւ. «Կը յիշենք բոլոր անոնց, որոնք երազեցին, սակայն զրկուեցան իրենց երազանքը իրականացած տեսնելէ: Կը յիշենք մեր ժողովուրդի գաւակները, որոնք հաւատքով, հաւատարմութեամբ եւ հայրենասիրութեամբ ընտրեցին փշոտ ճանապարհը, որ մեզ եւ գիրեք պիտի առաջնորդէր դէպի յաւիտենական կեանք»:

Տէր Մասիս շեշտեց, որ համախմբուելով մեր ազգային արժեքներուն, հաւատքին, լեզուին եւ հայրենիքին շուրջ, որպէս մէկ բունցք կը յաղթահարենք կեանքի բոլոր փոթորիկները:

ՀՀ Հալեպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգսեան իր սրտի խօսքը արտասանելով ըսաւ, որ



իւրաքանչիւր հայու, հայրենիքի թէ սփիւռքի մէջ, պարտքն է ջերմացնել հայրենիքը, իրականացնելով մեր 1,5 միլիոն նահատակներուն երազը, որն է ունենալ հզօր հայրենիք եւ ապրիլ անոր երդիքին տակ:

Աւարտին, Սուրբիոյ Հայ Աւետարանական Համայնքի Պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան իր պատգամը ուղղելով ըսաւ.

«Թէն այս օրերուն համաշխարհային մաշտապով համաճարակի մը իրականութեան առջեւ կը գտնուինք, սակայն աստուածաշնչական իմաստուն թելադրականութեամբ պետք է ընդունինք Նոր իրավիճակները»:

Յիշելու եւ պահանջելու կոչ ուղղելով, Վերապատուելի հրաւիրեց բոլորը պահանջատէր ըլլալու, մեզ մէ խլուած ապրելու եւ ստեղծագործելու աստուածատուր իրաւունքները ետ ստանալու համար՝ յիշելու եւ պահանջելու գործընթացը գործի վերածելով:

Յուշահանդէսը վերջ գտաւ երգչախումբի «Հայր Մեր»ի կատարողութեամբ եւ հոգեւոր պետերու աղօթքով: